Կարո՞ղ եմ արդյոք PC-OC-ին (Քրեական գործերով համագործակցության եվրոպական կոնվենցիաների իրականացման հարցերով փորձագետների կոմիտե) հարց ուղղել:

Քրեական գործերով համագործակցության Եվրոպայի խորհրդի գործիքների կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ հարցերը ողջունելի են: Դրանք կօգնեն PC-OC-ին վերոնշյալ գործիքների շարունակական զարգացման բնագավառում: Հարցերը կարող եք ներկայացնել Ձեր PC-OC ներկայացուցչին: Գործունեության և միջոցառումների վերաբերյալ հարցերը կարող եք ուղարկել Քարտուղարություն հետևյալ էլեկտրոնային հասցեով՝

Dg1.tcj@coe.int

Բնօրինակի հեղինակային իրավունքները պաշտպանված են Եվրոպայի խորհրդի կողմից

Թարգմանությունը հրապարակվել է Եվրոպայի խորհրդի պատվերով, իրականացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից

PREMS 129413 ARM

Քրեական իրավունքի վարչություն
Գլխավոր տնօրինություն –
Մարդու իրավունքներ և օրենքի գերակայություն

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Աջակցություն քրեական գործերով իրավական օգնությանը և համագործակցության զարգացմանը

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Քրեական գործերով դատական համագործակցության զարգացում և աջակցություն

Միջազգային դատական համագործակցությունը հիմնված է երեք հիմնարար սկզբունքների վրա: Դրանք են՝

> համագործակցության ոգին,
> կիրառելի իրավական գործիքների իմացությունը,
> համագործակցությունը հեշտացնելուն ուղղված գործիքների ճշգրիտ օգտագործումը:

PC-OC-ին (Քրեական գործերով համագործակցության եվրոպական կոնվենցիաների իրականացման հարցերով փորձագետների կոմիտե) կարևոր դերակատարություն ունի քրեական գործերով միջազգային համագործակցության հարցում:

Ինչ է իրենից ներկայացնում PC-OC-ին

PC (Քրեական գործերով) OC (Կոնվենցիաների կիրառում) Եվրոպայի խորհրդի էքսպերտների կոմիտե է, որը զբաղվում է քրեական գործերով միջազգային համագործակցությամբ և գործում է Քրեական գործերով եվրոպական կոմիտեի ենթակայության ներքո:

PC-OC-ին մշտադիտարկում է միջազգային քրեական համագործակցության բնագավառում Եվրոպայի խորհրդի կոնվենցիաների պատշաճ կիրառումը (մասնավորապես՝ հանձնում, փոխադարձ իրավական օգնություն և դատապարտյալների փոխանցում) և առաջարկում է այս բնագավառում կիրառելի նոր գործիքներ: Այն նաև վերոնշյալ գործիքները կիրառողների համար ստեղծում է այնպիսի օգտակար հնարավորություններ, ինչպիսիք են՝ տեղեկատվություն պետությունների վերաբերյալ, օրինակելի ձևեր, գործնական ուղեցույցեր և այլն:
Կոմիտեն կազմված է Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների կենտրոնական մարմինների ներկայացուցիչներից և դիտորդներից:

Տվյալ ոլորտում գործունեություն իրականացնողները կարող են օգտվել PC-OC Քարտուղարության կողմից կատարված փորձաքննությունից և իրենց ազգային փորձագետների օգնությունից

Կայքը

Էլեկտրոնային կայքը՝ www.coe.int/tcj հասցեով պարունակում է այս համագործակցության հետ կապված օգտակար տեղեկատվություն և փաստաթղթեր: Եվրոպայի խորհրդի շրջանակներում քրեական գործերով միջազգային համագործակցության կոնվենցիաների ոլորտում բոլոր գործունեություն իրականացնողների այցը տվյալ էլեկտրոնային կայք ողջունելի է:

PC-OC-ի կայքն ընդգրկում է՝
> տեղեկատվություն PC-OC-ի գործողությունների, ներառյալ գալիք և անցյալ հանդիպումների և միջոցառումների վերաբերյալ,
> իրավական ստանդարտներ և օգտակար տեղեկատվություն այս ոլորտում գործունեություն իրականացնողների համար (տեղեկատվություն պետությունների վերաբերյալ, PC-OC-ի գործունեության հիմնական ոլորտներում կիրառելի գործիքներ),
> Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային գործեր,
> տեղեկատվություն անցած միջոցառումների, ուսումնասիրությունների, գրավոր հետազոտությունների վերաբերյալ և այլ հրապարակումներ,
> PC-OC-ի գործունեությանը և ոլորտին առնչվող այլ օգտակար կայքերի հասցեներ: